ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 Ն.
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IED9-F5AD-449F-A3B0 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/11009/02/25 ք. Երևան
9 Հունվարի 2026թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Գրիգորյանս (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով <<ԱԴՐԻՆ ՇԻՆ>> ՍՊԸ-ի հայցադիմումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր <<ԱԴՐԻՆ ԾԻՆ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Լ.Օհանյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնք ՀԿՀ-ի՝ հետևյալ պահանջների մասին.

<<1. «ԱԴՐԻՆ ԾԻՆ» ՍՊ ընկերության և Վարդենիսի համայնքապետարանի միջև 16.06.2023 թվականին կնքված <<ՀՀԳՄՎՀ-ԲՄԱԾՁԲ-23/55-4>> ծածկագրով պայմանագիրը փոփոխել ներքոնշյալ վիճելի պայմանների վերջնական ձևակերպումների համաձայն.

«5.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 169,413,134 (մեկ հարյուր վաթսունինը միլիոն չորս հարյուր տասներեք հազար հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ, որից' 28,235,522 (քսանութ միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր քսաներկու) ՀՀ դրամը' ԱԱՀ-ն:

4-րդ չափաբաժնի՝ Խաչաղբյուր բնակավայրի 1 ՕՕՕմ, գինը կազմում է 82 027 057 ՀՀ դրամ, որից 13 671 176 ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5-րդ չափաբաժնի՝ Խաչաղբյուր բնակավայրի 1150մ, գինը կազմում է 87 386 077 ՀՀ դրամ, որից 14 564 346 ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները>>:

Էլեկտրոնային համակարգում հայցադիմումը մակագրվել է 16.10.2025թ. ժամը 21:30-ին:

Դատարանի 20.10.2025թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է, որի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 24.11.2025թ. որոշում է կայացրել Դատարանի հիշյալ որոշումը վերացնելու մասին:

Քաղաքացիական գործն էլեկտրոնային համակարգով հասանելի է դարձել 08.01.2026թ. ժամը՝ 21:30-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները

պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ենթակա է վարույթ ընդունման:

Միևնույն ժամանակ, Դատարանը գտնում է, որ պատասխանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքից անհրաժեշտ է պահանջել թիվ <<ՀՀԳՄՎՀ-ԲՄԱԾՁԲ-23/55-4>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 18.02.2026թ.:

Պատասանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքից պահանջել թիվ <<ՀՀԳՄՎՀ-ԲՄԱԾՁԲ-23/55-4>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2026.01.09 13:08:39 AMT

Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Դատավոր՝
Տիգրան Գրիգորյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am